

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 41 (141) ԳՅՈՒՂԵՑՆՑԵՍԿԵՐՆ ՀԵՆՐԵՄԵՑՑԵԼԻ № 41 (141)
ԳՐԱԴԱՐԱՆ

636.04

≥ - 99

մց

Հ Ր Ա Հ Ա Ն Գ
ԿԵՐԵԲԻ ՍԻԼՈՍՈՑՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՊ.ԺՈՂ.ԿՈՄԱՏՔ

ՅԵՐԵՎԱՆ - 1931

14 JUN 2013

21 746

14 SEP 2013

ԳՐԱԿԱՆՈՒԹ

ԿԵՐԵՐԻ ՍԻԼՈՍՍ.ՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ա.Ա.Խ.Ֆ.Հ.-ի հանրապետությունների յեվ ավտոմոմ մարզերի հողմողկոմասներին, Անդրկողկապյան յեվ հանրապետական կոլխոզներուններին յեվ հացանասնապահական միություններին, ռջիոդբաժիններին, ռջկոլխոզմիություններին, ռջանասնապահական միություններին յեվ առանձին սովորություններին:

Կերերի սիլոսացման նպատակ եւ անսառուններին ապահովել հյութալի կերպ։ Կերի ընդհանուր գեֆիցիար նկատի ունենալով, այս ձեռնարկման կիրառումը, Անդրկովկասի պայմաններում, հատուկ կարեվորություն եւ ներկայացնում։

Անդրհողժողկոմատը և Անդրկովկասայան կոլխոզներունը կարեվոր են համարում ընդգծել, վոր կերերի սիլոսացումը հնարավորություն եւ



Գավկաս № 6864 (բ)

Գատվեր № 3814

Տիրաժ 2000

Գետերատի տպարտուն, Յերևան

3

տալիս բոստանն-բանջարանոցային բուլսերի շատ
մնացորդները, կարտոֆիլի, շաքարի և կերի ճա-
կնդեղի թփերը և այլն վեր ածել ախորժելի և
լավորակ կերի:

Սիլոսացման միջոցով, վորպես կեր, ոգտա-
գործելի են գառնում զանազան վայրի բուլսեր,
վորոնք մինչև այդ բոլորովին անողագործելի և
վնասակար ելին համարվում, ինչպես՝ յեղեղը,
վոր Անդրկովկասում հսկայական տարածություն
և բռնում, ճիլ խոտը և վայրի բուլսերի այլ տե-
սակները: Վերջապես, անտառների հատումից ու
վարելահողերը թփուտներից մաքրելու հետևան-
քով ստացված բարակ ճյուղերն ու տերենե-
րը նույնպես, սիլոսացման միջոցով, կարող են
հսկայական քանակությամբ միջակ խոտի վորա-
կի համապատասխան կեր տալ*):

Անդրհողժողկոմատն ու Անդրկովկենտ-
րոնը հավատացած են, վոր կազմակերպություն-
ներն ու հողմարմինները, նաև առանձին սով-
խոզները, կոլխոզներն ու գյուղաբարագրական ըն-
կերությունները, հաշվի առնելով անասնապահու-
թյան զարգացման խնդիրները և ղեկավարվելով

*) Անդրհողժողկոմատը 1931 թվի համար հաս-
տատել է 175000 տոննի սիլոսացման պլան: Այդ պլա-
նը պիտի կատարվի:

16-րդ կուսհամագումարի դիրեկտիվներով, համ-
կոմկուսի կենտրոնմի և խորհուրդների 6-րդ հա-
սագումարի վրացումներով, ամեն միջոց ձեռք
կառնեն պլանը կատարելու համար:

Սիլոսացման պլանի կատարումն ապահովե-
րու համար բոլոր շահագրգոված կազմակերպու-
թյուններին առաջարկվում է՝

1. Յուրաքանչյուր սովխոզի, կոլ կտիվի,
արտադրական ընկերության արտադրական խոր-
հըրդակցություններում քննել սիլոսացման պլա-
նը, ճշառությամբ հաշվի առնելով սիլոսացունյու-
թը. այն ե՛թե այդ նպասակով կատարված ցանք-
սերը, թե վայրի բուսականությունը և թե բոս-
տանն-բանջարանոցային մնացորդների յենթադր-
վող բանակը: Միաժամանակ պետք ե կազմել
հատկապես ծառերի ճյուղերից ու տերեններից
պատրաստվելիք կերի պլանը:

2. Սիլոսի համար պետքական ամեն տեսակ
բուսականությունների քանակը վորոշելու հետ
մասին, պետք ե ավելի կամ պակաս ճշտությամբ
սահմանել նաև սրանցից լուրաքանչյուրի հավա-
քելու ժամանակը:

Սելոսալին կառուցումների քանակի և տա-
րողության խնդրի լուծումը կախված ե սելո-
սացվող լուրաքանչյուր բուլսի հավաքման ժա-

մանակից ու նրա քանակից, քանի վոր սելոսափն հորը, խրամատը կամ աշտարակը չի կարելի տարբեր ժամանակներում և մեծ ընդհատումներով լցնել:

3. 1 և 2-րդ կետերում հիշված տվյալները պարզելուց հետո, պետք է վորոշել սիլոսալին կառուցումների տիպը՝ հոր, խրամատ, կիսաաշտարակ, աշտարակ և այլն: Յեթե անհրաժեշտ ե միանվագ փոքր քանակությամբ նյութ սելոսացնել, պարզ ե, վոր պետք է փոսեր կամ լավագույն գեղքում՝ կիսաաշտարակ կառուցել:

Յերբ սիլոսացվող մասսան 20-25 տոննից չի անցնում, շինվում են միայն փոսեր կամ կիսափոսեր. կիսաաշտարակները կառուցում են 25-ից մինչև 150 տոնն մասսա ունենալու դեպքում, ըստ վորում մինչև 80 տոննի դեպքում—կառուցվում են սկզբատիպ կիսաաշտարակներ:

Յերբ մեծ քանակությամբ սիլոսալին մասսա կա, սակայն հնարավոր չե կիսաաշտարակներ ու աշտարակներ կառուցել, այդ գեղքում պետք է այդ մասսան սիլոսացնել խրամատներում:

4. Սիլոսի քանակն ու լցնելու ժամանակը սահմանելուց հետո, անհրաժեշտ է վորոշել սելոսացվող մասսան կտրատող մեքենաների ու գործիքների տեսակն ու վորակը:

Վորքան մասսան կոշտ ե, ահնքան ավելի մանըր պետք է կտրատել: Մանրացնելը կատարվում է այն նպատակով, վորպեսզի մասսան լավ մամլվի ու նստի: Այնպիսի նյութեր, ինչպիսին են ճակնդեղի և գազարի թփերը, կարելի լի և չմանրացնել:

Սիլոսացվող մասսան քիչ լինելու դեպքում կարելի լի մանրացնել նույնիսկ կացիններով, յերկաթլա բաներով կամ ձեռքի ծղոտահատերով:

Մասսան մանրացնող անհրաժեշտ գործիքների ու մեքենաների տեսակն ու քանակը վորոշելուց հետո, պետք է հաշվի առնել ձեռքի տակ գտնվող սիլոսահատներն ու ծղոտահատները, կարիք յեղած դեպքում միջոցներ ձեռք առնել նրանց նորոգելու համար, ճիշտ և ժամանակին բաշխում կատարել՝ նախապես ապահովելով այդ մեքենաները մեխանիկական շարժիչներով և քարշող կենդանի ուժով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Նկատի ունենալով սիլոսահատերի և ծղոտահատերի պակասը—շրջանային կազմակերպությունները պետք է նախատեսեն այդ մեքենաները տնտեսությունից-անտեսություն փոխադրելու անհրաժեշտությունը և բացի այդ, ունեցած կալորչ մեքենաները նախորոք հարմարեցնեն սիլոս հատելու համար:

5. Սիլոսացման պլանից յելնելով, պետք է վորոշել սիլոսնիկների անհրաժեշտ կազմը, այդ նպատակով պետք է նախորոք կոլխոզնիկներից, սովորողացին բանվորներից, այլ և ակտիվ գլուղացիներից պատրաստել անհրաժեշտ թվով ղեկավարներ ու անմիջական կատարողներ (բրիգադներ) և նրանց ամրացնել կոլխոզներին ու գյուղարտադրական ընկերություններին՝ մինչև սիլոսացման կամպանիայի վերջը:

6. Ցուրաքանչյուր սովորող, կոլխոզ և արտադրական ընկերություն պետք է սահմանի արտադրական խնճիրդակցության ընդունած պլանը կատարելու որացուցային ժամկետներ, նշանակել պատասխանատու անձինք՝ պլանում նշած առաջադրանքների կատարման համար, և սիլոսացման պլանը մտցնելով բերքահավաքի ընդհանուր պլանի մեջ՝ ապահովել թե՛ յեղած և թե՛ նոր պատրաստվող սիլոսային կառուցումների ժամանակին լցնելը:

7. Սիլոսային կուլտառաների ցանքի, խընամքի և բերքահավաքման աշխատանքները գընահատելիս հիմք պիտի ընդունել նման աշխատանքների համար գոյություն ունեցող աշխատանքի արտադրանքի նորմաները:

Սիլոսային մասսան փոսերի, խրամատների,

աշտարակների, կիսաաշտարակների մեջ լցելիս, ինչպես նաև և կառուցումների շինարարության ժամանակ կատարվում է ուժերի համապատասխան դասավորում և սահմանվում է յուրաքանչյուր աշխատող կոլխոզնիկի աշխատանքի արտադրանքի նորման:

ա. 5 տոնն տարողությամբ փոսը (մոտ 9,5 խոր. մետր ծավալի), վորի լայնությունը (տրամագիծը) 2 մետր ե, իսկ խորությունը՝ 3 մետր, կարող են փորել 4 բանվոր, այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր կոլխոզնիկ մեկ որում կարող ե փորել 1,25 տոնն սիլոսի փոս:

բ. Մեկ որում փորելու և լրիվ պատրաստելու համար, յելնելով 2 մետր լայնության և 3 մետր խորության հաշվից, կպահանջվի:—

Խրամատի յերկարությունը	Ծավալը (լո. մ. ~ոլ)	Բանվոր. ձեռքեր
5 մետր յերկարություն	30 լո. մետր	12
10 »	60	24
15 «	90	36
20 «	120	48
25 «	150	60
30 «	180	72

Ալղոթով, խրամատ փորելու համար խոր-

հուրդ ե տրվում կազմակերպել և մարդուց բաղկացած բրիգադներ խրամատի լուրաքանչյուր 5 մետր լերկարության բաժին—բատարեցալի հարար ան հաշվով, վոր լերկու մարդ աշխատեն բրիչով, իսկ լերկուսը՝ բահով (փոխփոխվելով):

Յուրաքանչյուր բատարեցա—բաժին փորելու համար, վորը կազմում է 30 խ. մետր, կըպահանջի 3 բանվորական որ, կամ մեկ կոլխոզնիկի կընկնի 7,5 խ. մետր, իսկ 180 խ. մետր ծավալ ունեցող խրամատը փորելու համար նույշես կապահանջվի 3 որ, միայն այս դեպքում միաժամանակ պետք ե աշխատեն բոլոր 6 բրիգադները:

Խրամատներից ու հորերից դուրս թափված հողը սալլերին բեռնելու համար 30 խ. մետրին անհրաժեշտ ե 3 բանվորական որ, իսկ 180 խ. մետրի համար՝ 18 բանվորական որ: Այսպիսով յուրաքանչյուր բաժին-բատարեցալի վրա ալդ աշխատանքի համար ընկնում ե ևս մեկ մարդ, վորմը պարտավոր ե մեկ բանվորական որում սայլ վրա բեռնել 10 խ. մետր հող:

Եեթե պատերի բարձրացման և ծածկի համար հողի կարիք չի զգացվում և հողը պետք ե բոլորովին հեռացվի, ապա այդ աշխատանքի համար կապահանջվի հետեւյլ քանակությամբ բան-

փորական որ՝ սալլի հետ միասին, յեթե յուրաքանչյուր սալլին բարձրվէ 0,6 խ. մետր կամ մեկ տոնն հող:

Փոխադրման վայրի հեռավորությունը	30 խ. մ.-ի դեպքում	180 խ. մ.-ի դեպքում
100 մետր հեռավորությունը	2,5 բանվ.	15 բանվ.
200 » » »	3 » »	18 »
300 » » »	3,5 » »	21 »
400 » » »	4 » »	24 »
500 » » »	4,5 » »	27 »

գ. Կիսաաշխարակների համար հոր փորելը կատարվում ե նույն հաշվիներից լենելով, սակայն ուժերի դասավորումը կախված ե կիսաաշխարակի տոննաժեց:

դ. Մեխանիքական (տրակտորի կամ այլ մատորի ուժով աշխատող) սիլոսահատ գործադրելու դեպքում, որական աշխատանքի արտադրանքի նորման ե՝ 2 մարդ—50 տոնն սիլաժ (կը տրատելն ու լցնելը, մեկ բանվորը մեւ ենայի մոտ, մլուսը՝ սիլոսի կառուցվածքում՝ կերը դարսելու համար):

յե. Զիաքարը ծղոտահատի դեպքում—աշխատանքի արտադրանքի նորման հավասար ե՝ 2 մարդ—10 տոնն սիլաժ:

գ. Զեռքի ծղոտահատի դեպքում՝ 2 մարդ
2 սոնն սիլած:

Ե. Սիլոսացման մասսան դժշտից տեղափոխող սայլապանի աշխատանքի արտադրանքի նորման նույն է, ինչ և հողը տեղափոխողինը, յեթե միայն մեկ սայլի վրա բարձվում է 0,6 լս. մետր կամ՝ 36... սիլոսացու մասսա:

Բ. Բանուժի ծախսի որական նորման.

1. Հորի վրա—10 լս. մետր—2 մարդ,
2. Խրամատի վրա—30 լս. մ.—6 մարդ,
3. Խրամատի վրա—60 լս. մ.—12 մարդ:

Ը. Կիսաշտաբակը և աշտաբակը ցեմենտով սվաղելու համար 10 լս. մետրին անհրաժեշտ է 3 մարդ:

Ի. Առանց պատերն ամրացնող վորեն շապիկի հորերն ու խրամատները կավով սվաղելու համար բանվորական ձեռքերի նորման նույնն է, ինչ վոր ցեմենտով սվաղելու դեպքում:

Լ. Պատերն աքրացնող շապիկ ունենալու դեպքում անհրաժեշտ է շապիկը շինելու համար ավելացնել ևս մեկ մարդ՝

1. Մեկ հորին—10 լս. մ.—1 մարդ,
2. Մեկ խրամատին—30 լս. մ.—3 մարդ
3. Մեկ խրամատին—60 լս. մ.—6 մարդ

Տ. Սիլոսացման համար թե վորակով և թե քանակով՝ ամենալավ նյութ համարվում են հատ-

կապես սելոսի համար ցանված յեղիսլացորենը, արևածաղիկը, սորգոն, սուզանի խոտը, վիկ վարսակի խառնուրդը, գեանախնձորը և ուրիշ ները, ինչպես և առվույտը, յերեքնուկը և աղն. ինչու և ամեն միջոց պիտի ձեռք առնել՝ մոքիլիզացիանի յենթարկելու հիշալ բույսերի սերմերի ներքին սեսուրմաները և ցանել ագրոնոմի ցուցմունքներով:

Սակայն, սերմերի և ընդհանրապես սիլոսի հատուկ ցանքերի բացակալությունը սովորություններին, կոլխոզներին և արտադրական ընկերություններին, ինչպես նաև շրջանավիճակություններին, չի ազատում սիլոսացման պլաններ կազմելու և այն կիրառելու աշխատանքից: Հյութալի կերերի գորություն ունեցող պահանջ լրացնելու համար պիտք է ոգտագործել տնտեսության ունեցած ամեն մի հնարավորություն, ինչպես նշված է այս հրահանգի սկզբում:

Վոռոգման առուների լեզերին, դաշտերի և սառնաների միջնախներում սովորաբար բուսնուն և բազմապիսի բուսականություն, վորը, յերբ վորպես խոտ հավաքվում ու չորացվում է, լավագույն դեպքում ստացվում է շատ կոպիտ և վատ ոգտագործվող կեր, մինչդեռ սիլոսացվելու դեպքում կստացվի շատ ավելի ախորժե-

լիու դրուբամարս կեր: Այդպիսի բուլութերից մեզ
մոտ տարածված են յեղինջը, ճիլ խոտը, թախ-
ափկը, քաղցր բիանը, դափա թիքյանը և այլն,
վորոնք սիլոսացման համար հրաշալի նյութեր են:

Հատկապես սիլոսացման համար հարուստ
նյութ ե յեղեգը: Նա բռնում ե հսկայական տա-
րածություններ համարյա բոլոր ցածրադիր վայ-
րերում, գետերի և լճերի ափերին: Կերերի մեծ
դեֆիցիտ ունեցող բառբակացան շրջաններում
յեղեգնի սիլոսացումը, կոլխոզների և արտադր-
րական ընկերությունների համար պիտի պարտա-
գիր համարվի:

Դրա հետ միասին հաշվի առնելով նաև հա-
տուկ ցանքերի պակասը սերմերի բացակայու-
թյան պատճառով, բոլոր շրջնողբաժիններին,
շրջկոլխոզմիություններին և շրջնացանասնապա-
հական միություններին առաջարկվում ե ստու-
գել թե ի՞նչ քանակությամբ վայրի բուսակա-
նությունը և հատկապես յեղեգը տեղ են բռնել
սիլոսացման պլաններում և ամեն միջոց ձեռք
առնել, վոր դրանք լրիվ ոգտագործվեն սիլոս
պատրաստելու համար:

9. Սպասվելիք սիլոսացվող մասսան հաշվե-
լիս, յեթե սեփական փորձ չկա, կարելի յէ ա-
ռաջնորդվել հետեւալ՝ մոտավոր թվերով.—

Սացվում ե բերք

- | | | | | |
|----|---|---------|--------|--------|
| 1) | Յեկիսկացութեն կողը երով 1 | հեկտար. | 20 | տոնն |
| 2) | Կանանչ արերածաղիկ | 1 | » | 18 » |
| 3) | Սորգո (սերմերը կաթնալին
կտմ մոմալին հոսունության) | 1 | » | 15 » |
| 4) | Սուրբանի խոտ | 1 | » | 15 » |
| 5) | Վիկ-վարսակի խառնուրդ | 1 | » | 10 » |
| 6) | Խոզաններից | 1 | » | 5 » |
| 7) | Կարտոֆիլի, ճակնդեղի թփեր, բոստան-բան-
ջարանոցային թափուկները — բերքի | 40 | տոկոսի | չափով: |

10. Նպաակահարմար ե դարմանի վորոշ
մասը սիլոսացնել, խառնելով այն շատ ջրալի-
բուլսերի, բոստան-բանջարանոցային թափուկ-
ների (ճակնդեղի, կարտոֆիլի թփեր, կաղամբի,
ձմերուկի, դղումի և այլ մնացորդների ու տերե-
ներ) հետ:

Դարմանի մեկ միավոր քաշին խառնել 2
քաշ խոնավ բուլսերից: Դղումի, ձմերուկի ցո-
ղուներն ու տերելիներն անպարհան մանրացնել:

Խոնավ բուլսեր չինելու դեպքում, դարմա-
նը թրջել ջրով, հասցնելով խոնավությունը
մինչև 65-70 տոկոսի: Սիլոսացված դարմա-
նը, նամանավանդ լերը նա մեքենաներով ե ման-
րացված, սնասուները շատ ավելի մեծ ախոր-
ժակով ու առանց մնացորդների յեն ուտում,
ան չոր գրությամբ կերցնելիս:

11. Նկատի առնելով, վոր մնացած ժամանակաշրջանը շատ կարճ և և սիլոսալին բարդ կառուցումների (աշտարակներ) գործում տեղերը բավականի փորձ չունեն, ընթացիկ տարվա սիլոսալին կառուցումների հիմնական ձեզ, կոլխոզների և արդագրական ընկերությունների համար, պետք ե ընդունել սիլոսալին հորերն ու խրամատները, մանավանդ վոր անցյալ տարվա փորձն ապացուցեց նրանց պիտանիությունը մեր պայմաներում:

Հորերի և խրամատների շինարարության ժամանակ դեկավարեկ հետևյալ կանոններով

1. Հորերի յեվ խրամատների տեսակները

Հորերն ու խրամատները, նայած յենթանողի ամրությանը, լինում են հետեւյալ տեսակների՝

ա. Պինդ կավալին յենթանողում — մանակի յերեսակալումով հորեր:

բ. Պինդ կավալին յենթանողում — առանց յերեսակալումի խրամատներ:

գ. Միջին ամրության և թուղ յենթանողերում — փրածքներից պահպանող և սիլոսի հութն ու արտաքին չքերը չանցկացնող ամբողջական յերեսակալումով եռեր յեվ խրամատներ:

2. Հորերի յեվ խրամատների ձեվերը


Հորը պետք ե լինի կլոր: Հորի պատերը պեսք ե միանգամայն ուղղաձիգ, հարթ և վողորկ լինեն, վորպեսզի սիլոսի մասսան լավ նստի: Խրամատը շինվում ե թեք պատերով, բանի վոր նույնիսկ պինդ յենթահողում յերկար խրամատներ ուղղաձիգ պատերով շինելլ՝ փրածքներ առաջացնելու տեսակետից՝ վտանգավոր ե: Խրամատների անկյունները պետք ե կորացնել:

Խրամատի պատերի թեքություն աստիճանը կախված ե յենթահողի ամբության աստիճանից, բայց վոչ ավելի, քան մոտավորապես $\frac{1}{5}$. յեթե յենթահողը պինդ ե (կավալին), կարելի լի խրամատի վորեցե մասը փորել 3,75 մետր, իսկ ներքեցի մասը 2,5 մետր լայնությամբ, յերբ խորությունը հավասար ե 2,5 մետրի:

3. Հորերի յեվ խրամատների պատերը

Պինդ կավալին յենթահողի գեպքում, խորհուրդ ե արգում հորերը յերեսակալել ըստ բարձրության՝ $\frac{1}{3}$ մասը, Յերեսակալը կարող ե լինել տախտակից կամ այլ թեթեվ նյութերից:

Փակուա յերեսակալը (տախտակներից) շինվում ե կոր ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ գեպքում՝ ութակողմանի:



Հորի յերեսակալած մասը մնում է կոր։
Վոչ պինդ, թույլ յենթահողերում հորը
պետք է յերեսակալել աղյուսով, ծառերի ճյու-
ղերից կամ յեզեղնից պատրաստած խորանման
գործվածքով կամ քարով։

Յենթահողի (պատերի) և գործվածքի ա-
րանքը լցում ու պինդ սեղմում է 20 ս.մ.
վոչ պակաս հաստության շերտ լավ կավ, ներսի
կողմից նույնպես կավով լավ սվաղվում է։

Աղյուսի յերեսնակալը շինվում է մեկ ա-
ղյուսից կավե շաղախով, կամ $\frac{1}{2}$ աղյուսով՝ խառը
շաղախով. 1 : 2 : 12 հարաբերությամբ (այսինքն
մեկ մասը ցեմենտ, 2 մաս կիր և 12 մաս
ափաղ)։

Մեկ աղյուսով շարելու գեպքում, վերջին-
ները պետք է շարել անպայման գլխամասերով
(գլխի կողմից): Յերկու դեպքում ել աղյուսների
միջեւ առաջացած արանքները ծածկվում են
յերկրորդ շարքի աղյուսներով։

Աղյուսի պատերը շարելուց հետո պիտի
թողնել, վոր չորանան։ Այսպես, խառը շաղախով
շարելու դեպքում 28 որ, իսկ կավե շաղախի
դեպքում – 14 որ, նայած յեղանակին։

Վերջին դեպքում ցանկալի յե հորի հատա-
կին կրակ վառել՝ կավը չորացնելու համար։ Նախ
քան շաղախի ամրանալը, հորը չի կարելի լցնել,

վորսվիետե կարող է վլվածք առաջանալ։ Յեն-
թահողի և շարված պատի միջև 20 ս.մ. հաստու-
թյամբ կավ պետք է լցնել և պնդացնել (ի հար-
կե շաղախը պնդացնելուց հետո): Հորի պատերը
ներսից կավով սվաղվում են։

Պինդ կավալին յենթահողում իսկ թեք պատե-
րով խրամատներ շինելիս պատերը չեն յերե-
սակալվում, իսկ վերին մասը վլվելուց պահպա-
նելու համար՝ յերկու կողմից գերաներ կամ
տախտակներ են դցում։

Թույլ յենթահողում խրամատի թեք պատե-
րը յերեսակալվում են հուսավածքով, հուսավածքը
շինվում է նույն նույթերից, ինչ վոր հիշած
է վերեվում։

Հուսավածքի ցցերը խփվում են հողի մեջ
0,5 մետր խորությամբ, ցցերի միջին տարածու-
թյունը, նայած հուսավածքի խտությանը և յեն-
թահողի ամրությանը, պիտի լինի 0,25-ից-0,50
մետր։

Ցցերի թեքությունը արվում է խրամատի
պատերի թեքությանը համապատասխան, բայց
վոչ ավելի, քան՝ $\frac{1}{5}$ ։

1. Հուսարելը կատարվում է հորիզոնական
շարքերով՝ մաքուր յերեալ գեպի խրամատի ներ-
ու անելով և միաժամանակ գրափ կողմից հուս-

բածքի և յենթահողի արանքը կավ եւ լցվում:
կավը պետք եւ ջրով թրջվի և լավ պնդացվի:

Ցցերի վերին մասերը ամրացվում են պատից մեկ մետր հեռավագության վրա՝ ալդ նախատակով խփված հատուկ ցիցերին, կլոր և դաշտը ձլուղերով:

Հյուսվածքը՝ ներսի կողմէց կավով լավ սրվաղվում եւ:

Թուլլ յենթահողերում, յերբ հորը կամ խրամառ լերեսակալված եւ յեղեգնյա հյուսվածքով, պետք եւ հետեւիել, վոր հյուսվածքը անպայման կավով լավ սվաղված լինի: Ալդ պահանջը առաջ եւ գալիս նրանից, վոր հյուսվածքը իր մեջ պարունակում եւ բազմաթիվ ոդով լի դատարկ տարածություններ, վոր հյուսվածքի վատ սվաղված լինելու դեպքում անցնում եւ սիլոսին և փչանում իրեն հաղորդակից շերտեր:

Հյուսվածքը կարելի յել լավ սվաղել հետեւիալ կերպ: —

Կավը ջրով լավ հունցել, նախորոք դարման խառներով և կիսահեղուկ վիճակում վերցնել ու վոչ միայն հյուսվածքը ներսի ու դրսի կողմից սվաղել, այլ և նրանով լցնել բոլոր դատարկ տարածություններն ու ձեղքերը և լավ պնդացնել այնպես, վոր հյուսվածքի միջից դորս վանդի այնտեղ լեղած ամրող ոդը:

Հորի յել խրամատի հատակը

Այն գեղքերում, յերբ հատակը կավային չե, փոսերում և խրամատներում ամենապակասը 20 ս.մ. հաստությամբ շերտով լավ կավ եւ լցվում և պնդացվում եւ տափառփելով: Հորի հատակի կենտրոնում մոտավորապես 20-30 ս.մ. խորության թեքությունը պատերից դեպի կենտրոն փոս եւ արփում: Այդ փոսը ծառալում եւ սիլսը դադարկելուց հետո մնացած ջրալի մասեր դուրս հանելու համար: Խրամատներում մի քանի ալդպիսի փոսեր պետք եւ շանել:

Այդ փոսերը պիտի շրջապատվեն տախտակով:

5. Հորի յեվ խրամատի տեղի ընտրությունը

ա. Հորն ու խրամատն պետք եւ գոմին մոտիկ լինեն, բայց մեզընդունարաններից բավական հեռու:

բ. Նրանց տեղը պետք եւ բարձրագիր լինի, այնպես վոր անձրեվային ջրերը բնական հոսանք ունենան:

գ. Ամենալավ յենթահողը լավ նստած կավային և խառողակավ հողն եւ:

դ. Պետք եւ աշխատել այնպիսի տեղ ընտրել, վոր հորի կամ խրամատի հատակը լենթահողային ջրերի մակերեսից առնվազն $\frac{1}{2}$ մետր բարձր լինի:

յե. Վորպես որենք, խրամատները պետք ե
գոմերի հանդեպ ուղղահայաց դասավորություն
ունենան և ըստ հաւաքորին կերանցքների և
նրանց միջի տարածությունը կարճ լինի: Զու-
գահեռ ընկած խրամատների միջին տարածու-
թյունը պետք ե իրեն խրամատի խորությունից
առնվազն յերկու անգամ մեծ լինի:

6. Հորերի յեվ խրամատների չափերը

Ամենալավ հորը համարվում է այն, վորի
խորությունը $1\frac{1}{2}$ -2 անգամ ավելի լի էր լայնու-
թյունից: Բայց պետք ե սիստամանակ նկատի
առնել, վոր շատ խոր լինելու դեպքում կերն
այնտեղից գուրս հանելը շատ դժվար է: Բացի
այդ, խորությունը կախված է յենթահողային
ջրերի մակերեսի բարձրությունից, յենթահողի
ամրությունից:

Համենայն գեպս հորի և խրամատի խորու-
թյունը 2 մետրից և լայնությունը դարձյալ 2
մետրից պակաս չպետք ե լինի:

Սովորաբար հորերը փորում են 2-3 մետր
լայնությամբ և $3\frac{1}{2}$ մետր խորությամբ:

Խրամատի խորությունը ընդունված է 2,5
մետր, լայնությունը վերեվում՝ 3,75 մետր, ներ-
քեվում՝ 2,5 մետր:

Այն տեղերում, վորտեղ յենթահողային ջր-
երը մոտիկ են և պետք ե խրամատը սովորա-
կան խորության լինի, պետք ե խրամատի պա-
տերը գետնից մինչև 1 մետր բարձրացնել և
նրանց կողքերն լցնել հորից հանած հողով:

Խրամատի խորությունը կախված է անա-
սուների քանակից, բայց 30 մետրից ավելի լեր-
կար խրամատ փորել խորհուրդ չի արվում:

Հորի ու խրամատի քանակին ու չափերը
կախված են սիլոսացման յենթակա կերերի քա-
նակից: Հաշիմսեր կատարելու համար, սովորա-
բար ընդունված է հաշվել մեկ գլուխ խոշոր յեղ-
ջուրավոր անասունին 16 կիլոգրամ սիլոս, ուս-
տի, յեթե 16-ը բազմապատկենք անասուների
քանակի և կերակրման որերի թվի վրա, կստաց-
վի անտեսության համար անհրաժեշտ սիլոսաց-
ված կերի քանակը կիլոգրամներով: Բաժանելով
այդ թիվը 1000-ի վրա՝ կստանանք նույն քանա-
կը տոններով: Իմանալով, վոր մեկ խորանարդ
մետր սիլոսը մոտավորապես 0,5 տոնն ե կշռում,
հեշտ ե վորոշել արդեն, թե ինչ տարածության
հոր կամ խրամատ ե հարկավոր փորել: Դրան
պետք ե ավելացնել խմորման նետեփանքով տե-
ղի ունեցող 15-20 տոկոս կորուստը:

Յեթե կերակրման որերի թիվը ընունենք տա-

բեկան 180, ապա այդ ժամանակամիջոցի համար
1 կովի համար կպահանջվի 3600 կրո. (3,6 տոնն)
սիլոսացված կեր:

7. Խճշպես փորել հորեն ու խրամատը

Հոր ու խրամատներ փորելու սովորական
գործիքներ են՝ յերկաթյա բահը, բրիչն ու նի-
զը, Խրամատները փորելիս խորհուրդ ե արր-
վում ոգտագործել գութանը (հողը փորելու հա-
մար) և ձիաքարշ սավոկ (հողը գուրս տանելու
համար), վորը խոշոր չափով կթեթեվացնի աշ-
խատանքը:

Հորի և խրամատի փորելու տեղը նախորոք
չափվում և գծվում են:

Հորի յենթադրվող տեղի կնտրնում յից են
խփում, նրա ծալրին ամրանցում են մեկ ուրիշ
փակուծալրին խփված մեխերով: Ցցի կենարո-
նի և մեխի միջին տարածությունը պետք ե հա-
փասար լինի փոսի լանության կեսին: Մեխի
միջոցով փայտը ցցի շուրջը պտտացնելով, նշա-
նակում են ապագա փոսի յեզրերը: Պետք ե հե-
տեվել, վոր պտտվող փայտը միշտ ուղիղ դրու-
թյուն պահպանի, վորի համար նրա վրա դնում
են հաշթացուց գործիք (վատերպաս):

Խրամատ փորելիս, յիցերով նշանակվում
են նրա յեզրերը և յիցերի վրալից թել են քա-
շում, վորը և ցուց ե տալիս ապագա խրամատի
սահմանները, Փորելը և հողը գուրս տալը կա-
տարվում ե դրսից գեպի ներս:

Փոսերը փորելիս պետք ե հետեւ վոր
պատերը լինեն ուղղաձիգ և հարթ, առանց խոր-
դուբորդությունների, վըս համար պետք ե հա-
ճախ պատի ուղղաձգությունը ստուգել յերկար
քանոնափայտի և շուղուկի միջոցով:

Խրամատների պատերի հարթությունը նույն-
որես հաճախ ստուգվում ե:

Հողը հորից ու խրամատից դուրս են տա-
լիս սովորական միջոցներով՝ բահով, գուլով,
զամբուղով, ձիաքարշ ճախարակի միջոցով:

Հորի կամ խրամատի յեզրերին պետք ե
տախտակներ դնել, վորպեսզի հողը ներս չթափ-
վի և յեզրերը չփլվեն:

8. Հորի յեվ խրամատի ծածկը

Հորերն ու խրամատները լցվում են յեզրե-
րից ավելի բարձր:

Հորի և խրամատի յերեսին լցված կանաչ
մասսան մեկ յերկու որից հետո լավ մամլվում և
նորից նույնպես լցվում ե ու վերջնական տափ-
ատիքումից հետո վերջնականապես ծածկվում ե

տրապես. կանաչ մասսայի վրայից լցվում է թըրջված դաբմանի, մղեղի կամ թրջած չոր տերևներ 10-15 սանտիմետր հաստության շերաբ, դրա վրա վրայից լցվում է 25-30 ս. մ. լավ ունցած կավ ու լավ տափտափվում է, և դրա վրայից արգեն լցվում հողի գմբեթաձե հաստ շերտ և նույնպես տափտափվում: Ծածկի յեզրերը պետք ե հորի լեզրերից 1 մետր, իսկ խրամատի լեզրերից 0,5-0,75 մետր դեպի դուրս պետի լինի:

Այս ծածկը միաժամանակ և մամլիչ դեր և կատարում և սիլոսը պահպանում և սառելուց:

Հորի և խրամատի շուրջը, լեզրերից մոտավորապես 0,5 մետր հեռու պետք ե առու փորել, անձրևային և այլ ջրերը նրանցից հեռու պահելու համար:

Մթնոլորտային տեղումներից պահպանելու համար սիլոսի հորի և խրամատի վրա շարժական վրանանման պարզ ծածկ ե շինվում: Սիլոսը աղտոտվելուց զերծ պահելու համար, փոսի մի կողմում փայտյա վահան ե շինվում, փորի վրա լցվում է հորից հանված սիլոսը: Խրամատի համար այդ վահանը շարժական ե շինվում:

Սիլոսային կառուցումների շինարարության տեխնիկային վերաբերվող բոլոր հարցերով, մասվանդ բարդ կառուցումների դեպքում, ան-

հրաժեշտ ե կապվել անդրկոլտնտշինի և տեղական գլուղտնտշիների հետ: Վերջինները պարտավոր են սիլոսային շինարարության ասպարիզում տեխնիքական ցուցումներ տալ, անկախ նրանից, թե արդ շինարարությունը անմիջականորեն իրենց միջոցով ե կատարվում, թե սովորողի, կոլխոզի ու արտադրական ընկերության:

13. Ցանովի բույսերը սիլոսի համար հավաքելիս պետք ե հետևել, փոր այդ բույսերը լրիվ չհասունանան ու փայտանան, ինչու և հարկավոր ե (յեզրիպտացորեն, սորգո) արդ բույսերը հավաքել նրանց հատիկների կաթնալին և մոմալին համնության շրջանում, արևածաղիկը—ծաղիկների պսակաթերթերի թառամելու, սկզբին:

Կարտոֆիլի թփերը պետք ե, հավաքել, յերբ նրա ծաղիկները բոլորովին թառամած կլինեն:

Կարտոֆիլի թփերը մինչև վերջնական չորանալը միաժ չունի թողնել արմատի վրա, քանի փոր պալարների բերքը գրանից չի ավելանում:

Բոլոր մոլախոտերն ու յեղեղը պետք ե հավաքել կանաչ վիճակում, թուլ չտալով, փոր նրանց սերմերը հասունանան և ցողունները փայտանան:

Հորերի յել խրամատների նախապատրաստումը
սիլոսացման համար

ա. Սիլոսը լցնելուց առաջ հորերի ու խը-
րամատների պատերը պետք ե լավ կոկվեն և
բոլոր խորդութորդությունները հարթվեն:

բ. Հորերի պատերը պետք ե խոնավաց-
վեն: Հորերի խոնավացումը և կավով սվաղելը
կատարվում ե աստիճանաբար՝ 2-3 որվա ըն-
թացքում:

Մինչև սիլոս լցնելը, հորի պատերը մի քա-
նի որ ցնցուղով թրջում են: Միանգամից պա-
տերին շատ ջուր ածել չի կարելի, քանի փոք-
ր ջուրը արագությամբ ծծվելով գրունտի մեջ, կտ-
րող ե պատերի հատակը լվանալ—տանել և փրկ-
վածքներ առաջնային պահպան պահպան:

գ. Հորն ու խրամատները լցնելուց առաջ
անպայման պետք ե լվացված, մաքրված և հըղ-
կված լինեն:

Կերերի նախապատրաստումը սիլոսացման
համար

ա. Սիլոսացման համար կերերը հնձվում եւ
հավաքվում են սիլոս լցնելու որը, և բերենում
են հորերի ու խրամատների մոտ այն հաշվով,
վոր յերկար ժամանակով վերջինների մոտ մեծ
քանակությամբ կանաչ մասսա չդիպվի:

բ. Սիլոսացվող մասսան չպետք ե քարերի,
ավազի, հողի հետ խառն կեղտոտված լինի, քա-
նի վոր ալզ բոլոր խառնությունները թե՛ վասա-
կար են կենդանիների համար և թե՛ կարող են
սիլոս հատող մեքենաները փչացնել:

գ. Սիլոսացվող մասսան պետք ե կտրատված
լինի. Վարքան կոշտ ե սիլոսացվող բույսի ցողու-
նը, այնքան նա շատ պետք ե մանրացվի. կտր-
ների մեծությունը, նայած բույսի կոշտությանը,
2—5 ս. մ. պետք ե լինի:

դ. Սիլոսացվող հյութալի և փափուկ նյու-
թերը՝ (թփերը, կաղամբի տերենները, յերիտա-
սարդ յերեքնուկը և այլն), նույնպես պետք ե ման-
րացվեն, թեկուզ բահերով միայն, քանի վոր այդ
շատ կարեսը և մասսան տափառիկ ու մամ-
լելու տեսակետից:

է. Սիլոսացվող մասսան պետք ե ունենա
65 տոկոս խոնավություն. Խոնավության աստի-
ճանը վորոշվում ե հետեւյալ ձևով.—վերցնում են
սիլոսացվող բույսերից մի փունջ և վոլորում են,
յեթե հյութը դուրս չի դալիս—նշանակում ե
բույսը պահանջված խոնավությունը ունի, իսկ յե-
թե հյութը այնքան ե, վոր նույնիսկ կաթում ե—
նշանակում ե խոնավությունը պահանջից ա-
վելի յե:

16. Հարերի յեվ իրամատների լցնելը

ա. Մանրացրած մասսան լցվում ե հորերի
և խրամատների մեջ և պինդ տափափակում—
մամլվում ե:

Տափափելն ու մամլելը կատարվում ե լեռ-
կաթյա և փալոյա մամլիչներով (արամբովկա)
կամ վոտքերով:

բ. Ցերք միննույն կառուցվածքում լցվում
են տարբեր խոնավության բուլսեր, այդ գեղ-
քում ավելի խոնավ բուլսերը դարտվում են պա-
տերին մոտիկ:


Ծամլելիս մեծ ուշադրությամբ պետք ե
տափափել արդ պատերին մոտիկ ընկած տա-
րածությունը:

գ. Սիլոսի լցնելը պետք ե կատարվի հա-
վասար շերտերով՝ կառուցվածքի ամբողջ տա-
րածության վրա:

դ. Խրամատները պետք ե լցվեն իրենց ամ-
բողջ յերկարությամբ միանգամից և որական
առնվազն 3-4 մետր հաստության սիլոսի մամ-
լած շերտով:

յե. Սիլոսի կառուցվածքները պետք ե լցնել
անրնդհատ, 2-3 որում:

զ. Լցնելու հետ միասին պատերն աստիճա-
նաբար խոնավացնեն են:



21.746